



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ պետական բյուջեի կատարման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին

Եզրակացություն ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Կարծիք

Հաշվեքննության է ենթարկվել ՀՀ 2021թ. պետական բյուջեի միջոցների ֆինանսական փաստաթղթերի վարման պահանջների կատարումը և դրա արդյունքում ձևավորված հաշվետվությունների (այսուհետև՝ ֆինանսական հաշվետվություններ) արժանահավատությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներառվում են ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում:

Հաշվեքննիչ պալատի կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում ՀՀ 2021թ. պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը: Ըստ այդմ՝ Հաշվեքննիչ պալատը ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ արտահայտում է դրական եզրահանգում:

Կարծիքի հիմք

Հաշվեքննություններն իրականացվել են «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին (այսուհետև՝ Օրենք), Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված՝ Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների հիման վրա մշակված մեթոդաբանություններին, ուղեցույցներին և այլ փաստաթղթերին համապատասխան: Այդ իրավական ակտերից բխող

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը» բաժնում: Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է հաշվեքննության ենթակա մարմիններից և կազմակերպություններից՝ ՀՀ Սահմանադրությանը և Օրենքին համապատասխան: Հաշվեքննությունների ընթացքում պահպանվել են էթիկայի պահանջները՝ համաձայն Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված՝ «Հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող՝ միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենշային չափանիշներ»-ի և «Հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոններ»-ի: Ձեռք են բերվել բավարար (համապատասխան) հաշվեքննության ապացույցներ՝ վերոնշյալ կարծիքն արտահայտելու համար:

Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչները պատասխանատու են բյուջետային ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համար, որն անհրաժեշտ է առերևույթ հանցագործության հատկանիշների կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների հաշվեքննության համար

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունն է՝ ստանալ ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ՀՀ Ազգային ժողովին ներկայացնել պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր (ոչ բացարձակ) մակարդակի հավաստիացում է: Այն չի երաշխավորում, որ Օրենքին և Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների հիման վրա մշակված մեթոդաբանություններին, ուղեցույցներին և այլ փաստաթղթերին համապատասխան իրականացված հաշվեքննությունը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ առերևույթ հանցագործության հատկանիշների արդյունքում, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք,

առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա:

Հաշվեքննության ընթացքում կիրառվել է մասնագիտական դատողության սկզբունքը և պահպանվել մասնագիտական կասկածամտության սկզբունքը: Բացի այդ՝

- հատկորոշվել և գնահատվել են առերևույթ հանցագործության հատկանիշների կամ սխալի արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծվել և իրականացվել են հաշվեքննության ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք են բերվել հաշվեքննության ապացույցներ, որոնք բավարար (համապատասխան) են կարծիքի համար: Առերևույթ հանցագործության հատկանիշների հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ առերևույթ հանցագործության հատկանիշները կարող են ներառել հանցավոր համաձայնության, զեղծարարության, միտումնավոր բացթողումների, սխալ ներկայացումների կամ ներքին հսկողության համակարգի չարաշահման հատկանիշներ:
- եթե հաշվեքննության ընթացքում Հաշվեքննիչ պալատը գալիս է հետևության, որ կատարված արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, համապատասխան նյութերը Հաշվեքննիչ պալատի որոշմամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազություն:
- պատկերացում է կազմվել հաշվեքննությանը վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ հաշվեքննության ընթացակարգեր նախագծելու նպատակով, և ոչ թե հաշվեքննության օբյեկտի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատվել է ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- բացահայտված խեղաթյուրումների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատը որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

Հաշվեքննության օբյեկտների ղեկավարներին, ի թիվս այլ հարցերի, ներկայացվել են հաշվեքննության առաջադրանքները, ինչպես նաև հաշվեքննության ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերից, ներառյալ՝

ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերություններից բաղկացած հաշվեքննության արձանագրությունները՝ տալով վերջիններիս վերաբերյալ առարկություններ և բացատրություններ ներկայացնելու հնարավորություն:

Եզրակացություն օրենսդրական և իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների պատասխանատվությունը

Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչները պատասխանատու են ֆինանսատնտեսական գործունեությունն իրականացնել իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունն է՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում ներկայացնել տեղեկատվություն հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ (սույն եզրակացության 2.1-րդ բաժին): Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում օգտագործվում են համապատասխանության հաշվեքննությունների արդյունքները, որոնք ենթադրում են՝ որոշել հաշվեքննության օբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին: Հաշվեքննիչ պալատը չի հաշվեքննում հաշվեքննության օբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը բոլոր իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված բոլոր այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Անհամապատասխանություններն արձանագրվել են միայն այն պետական մարմիններում, որոնք ներառված են եղել Հաշվեքննիչ պալատի 2021թ. գործունեության ծրագրի առաջին մասում: Հայտնաբերված անհամապատասխանությունները չեն ազդում սույն եզրակացության «Անկախ հաշվեքննության կարծիք» բաժնի «Կարծիք» պարագրաֆում ներկայացված եզրահանգման վրա:

Հաշվեքննիչ պալատի պատասխանատվության շրջանակներում են նաև ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման ֆինանսական հաշվետվություն-

ների վերաբերյալ եզրակացության «Հաշվեքննիչ պալատի պատասխանատվությունը» բաժնում ներկայացված՝ համապատասխանության հաշվեքննություններին վերաբերելի հարցերը:

Առանցքային անհամապատասխանություններ

Առանցքային անհամապատասխանություններն այն անհամապատասխանություններն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի են ՀՀ պետական բյուջեի կատարման համապատասխանության հաշվեքննությունների ընթացքում:

ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արդյունքում, ընդհանուր պետական բյուջեի համար առանցքային անհամապատասխանություններ չեն արձանագրվել:



Ատոմ Զանցուղազյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ

26 մայիսի 2022թ.

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Բաղրամյան 19, Երևան, Հայաստանի Հանրապետություն

2. Հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն

2021թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով, Հաշվեքննիչ պալատն իրականացրել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման 72 հաշվեքննություն 18 գերատեսչություններում (կատարող), որոնց բաժին է ընկել ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի (դրամարկղային ծախսի) 91.1%-ը: Հաշվեքննությունների արդյունքներն ամփոփված են ընթացիկ եզրակացություններում, որոնք Օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, ինչպես նաև հրապարակվել Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայք-էջում (բացառությամբ 8 ընթացիկ եզրակացությունների, որոնք պարունակել են օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ):

Հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի գործունեության կանխարգելիչ դերը, եռամսյակային հաշվեքննությունների ընթացքում հայտնաբերված մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ տարեվերջի դրությամբ շտկված են եղել:

Պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների շրջանակներում, երեք դեպքում¹ Հաշվեքննիչ պալատը եկել է հետևության, որ կատարված արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, և համապատասխան նյութերը Հաշվեքննիչ պալատի որոշմամբ ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

¹ Էկոնոմիկայի նախարարությունում ՀՀ 2021թ. պետական բյուջեի երեք և ինը ամիսների կատարման հաշվեքննությունների և Պաշտպանության նախարարությունում իրականացված հաշվեքննության արդյունքներով:

2.1. Հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվություն²

2.1.1. Անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափ

Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հայտնաբերված խեղաթյուրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը սույն եզրակացության 2.1.2 բաժնում: Հաշվեքննիչ պալատը նպատակ չունի սույն եզրակացությունում վերաշարադրել հայտնաբերված անհամապատասխանությունների առանձին դեպքերը (բացառությամբ ընդհանուր պետական բյուջեի կատարման համար առանցքային անհամապատասխանությունների, որոնք, առկայության դեպքում, ներկայացվում են անկախ հաշվեքննության կարծիքի «Առանցքային անհամապատասխանություններ» բաժնում), քանի որ վերջիններս զետեղված են 2021թ. պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններում և հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայք-էջի (www.armsai.am) «Ընթացիկ եզրակացություններ» բաժնում (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների):

2.1.2. Ամփոփ տեղեկատվություն

18 գերատեսչություններում (կատարող) իրականացված ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման 72 հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել են և 31.12.21թ. դրությամբ առկա են եղել 138 հատ անհամապատասխանություններ՝ 13 գերատեսչություններում (կատարող) (աղյուսակ 1):

² Անհամապատասխանությունը՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին ոչ համապատասխան կերպով պետական բյուջեի միջոցները, ստացած փոխառություններն ու վարկերը, պետական սեփականությունը օգտագործած լինելու դեպքն է:

Աղյուսակ 1. Անհամապատասխանությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ըստ գերատեսչությունների

N	Գերատեսչության (կատարող) անվանումը	Անհամապատասխանությունների քանակ (հատ)
1	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	34
2	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	28
3	Պաշտպանության նախարարություն (գաղտնի)	13
4	Առողջապահության նախարարություն	12
5	Պետական եկամուտների կոմիտե	11
6	Արտաքին գործերի նախարարություն (գաղտնի)	10
7	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	7
8	Էկոնոմիկայի նախարարություն	7
9	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն	4
10	Ոստիկանություն	4
11	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	3
12	Արտակարգ իրավիճակների նախարարություն	3
13	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	2
ԸՆԴԱՄԵՆԸ		138

2.2. Հայտնաբերված խեղաթյուրումների վերաբերյալ տեղեկատվություն³

2.2.1. Խեղաթյուրումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափ

Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հայտնաբերված խեղաթյուրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը սույն եզրակացության 2.2.2 բաժնում: Պետական բյուջեի կատարման մակարդակում առանցքային խեղաթյուրումները ներկայացվում են անկախ հաշվեքննության կարծիքի «Հաշվեքննության առանցքային հարցեր» բաժնում: Սույն եզրակացության 2.2.3 բաժնում ներկայացվում է առանձին գերատեսչության (կատարող) մակարդակում նշանակալի խեղաթյուրումների վերաբերյալ տեղեկատվությունը: Հաշվեքննիչ պալատը նպատակ չի հետապնդում սույն եզրակացությունում վերաշարադրել իր գործունեության ընթացքում հայտնաբերված բոլոր խեղաթյուրումների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, քանի որ այն իր անհրաժեշտ մանրամասներով, ներկայացված է 2021թ. պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայք-էջի (www.armsai.am) «Ընթացիկ եզրակացություններ» բաժնում (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների):

2.2.2. Ամփոփ տեղեկատվություն

18 գերատեսչություններում (կատարող) իրականացված ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել և 31.12.21թ. դրությամբ առկա են եղել 26 հատ խեղաթյուրումներ 6 գերատեսչություններում: Խեղաթյուրումների ընդհանուր գումարը կազմել է 2,651,846.04 հազ. դրամ կամ հաշվեքննված գերատեսչությունների տարեկան դրամարկղային ծախսի 0.15%-ը:

³ Խեղաթյուրումը՝ ֆինանսական հաշվետվությունում ներկայացված հոդվածի գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման և ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքների պահանջներին համապատասխան լինելու համար պահանջվող հոդվածի գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման միջև տարբերությունն է:

Աղյուսակ 2. Խեղաթյուրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

N	Գերատեսչության (կատարող) անվանումը	2021թ. դրամարկղային ծախսը (մլն. դրամ)	Խեղաթյուրումներ		
			Տես. կշիռը դրամարկղային ծախսում (%)	Քանակ	Գումար (մլն. դրամ)
1	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)	109,464.8	1.16	8	1,274.4
2	Էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ)	40,036.1	2.64	4	1,057.1
3	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն (ՔԿԾ)	11,195.9	0.24	2	26.5
4	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ)	69,898.7	0.31	3	217.1
5	Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ)	161,211.7	0.05	3	73.1
6	Առողջապահության նախարարություն (ԱՆ)	157,359.7	0.002	6	3.8
ԸՆԴԱՄԵՆԸ		1,826,773.2	0.15	26	2,651.9

2.2.3. Առանձին գերատեսչության (կատարող) մակարդակում նշանակալի խեղաթյուրումներ

2.2.3.1. ՏԿԵՆ-ի կողմից կատարված 1049-21004 «ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում» միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածի գծով դրամարկղային ծախսը խեղաթյուրված է եղել 1,211,845.62 հազ. դրամի չափով:

Գնային փոփոխության հետ կապված կարգավորումները վարկային պայմանագրերի ընդհանուր պայմաններով սահմանված կարգին անհամապատասխան հաշվարկելը (կարգավորման գործակիցը հաշվարկվել է ոչ թե մեկ ամսվա համար, այլ մի քանի ամիսների համար հաշվարկել է միջին թվաբանական գործակից, աշխատանքները ժամկետում չավարտելու պարագայում չեն ընտրվել պատվիրատուի համար նախընտրելի գործակիցները) և նյութերի գների ու միջին աշխատավարձի բազային և ընթացիկ չափերի՝ վերջիններիս աղբյուր հանդիսացող տեղեկագրերում և կայքերում նշված չափերից տարբերվելը, հանգեցրել են գնային կարգավորումների՝ 813,424.50 հազ. դրամի չափով ավելի հաշվարկման:

Ժայռային լիցքի աշխատանքներում պատվիրատուի կողմից առաջարկված փոփոխության ժամանակ (Ժայռային հանույթի փոխարինում Ժայռային լիցքով) աշխատանքի նոր գինը կապալառուի կողմից չհաշվարկելու և «Շինհրապարակի որակի և տեխնիկական հսկողության ապահովման ձեռնարկ»-ով սահմանված կարգին ոչ համապատասխան հաշվարկելու արդյունքում, պայմանագրային գինը նվազեցվել է 152,286.04 հազ. դրամով պակաս չափով:

Բիտումով կայունացված խիճավազային շերտի նոր գնի հաշվարկներում օգտագործված նյութերի գներն ինֆորմացիոն տեղեկագրերում սահմանված գներից բարձր ընդունելը, 1տ խտացված ասֆալտբետոնե խառնուրդը 1տ չխտացված ասֆալտբետոնե խառնուրդից 1.58 անգամ թեթև ընդունելը, 1քմ խտացված ասֆալտբետոնե խառնուրդի պատրաստման համար անհրաժեշտ լցանյութերի ծավալն ինժեների կողմից հաստատված ասֆալտբետոնե խառնուրդների պատրաստման անձնագրերում (բաղադրատոմսերում) սահմանվածից այլ ծավալ ընդունելը, ասֆալտբետոնե շերտի կառուցման համար անհրաժեշտ մեխանիզմների արտադրողականությունը սահմանվածից ցածր ընդունելը, ասֆալտբետոնի արտադրության գործարանի ծախսերը և նյութերի տեղափոխման ծախսերը տարբեր հաշվարկներում տարբեր ընդունելը հանգեցրել են 114,384.15 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

Միջանկյալ վճարման վկայականներում աշխատանքների պայմանագրային հաստատված ծավալների փոխարեն աշխատանքների համար անհրաժեշտ կոնստրուկցիաների գինը հաշվարկելը հանգեցրել է 96,000.00 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

Ժայռային հանույթի և հորատապայթեցման աշխատանքների ծավալը, առանց որևէ փոփոխության, նախագծով և պայմանագրով սահմանված ծավալներից 7,302.07խմ-ով ավելի հաշվարկելը հանգեցրել է 35,750.93 հազ. դրամի չափով խեղաթյուրման:

2.2.3.2. ԷՆ-ի կողմից կատարված 1022-12004 «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» (452200) հոդվածը խելաթյուրված է եղել 717,959.18 հազ. դրամի չափով:

Կաթի և խաղողի մթերմամբ զբաղվող կազմակերպություններին վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող՝ վարկառուների կողմից ներկայացված տեղեկատվության (ծև 1) և ֆերմերների համայնքների կողմից տրամադրված տեղեկատվության համադրության արդյունքում արձանագրվել է ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի մասով ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորված տոկոսագումարի 717,959.18 հազ. դրամի չափով խելաթյուրում:

2.2.3.3. ԷՆ-ի կողմից կատարված 1058-11001 «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» միջոցառման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (411100) հոդվածի գծով դրամարկղային ծախսը խելաթյուրված է եղել 336,696.49 հազ. դրամի չափով:

Դասակարգման խելաթյուրումն առաջացել է աշխատավարձերի և հավելավճարների կազմում պարզևատրման ծախսերի ներառման արդյունքում:

2.2.3.4. ԱՆ ՔԿԾ-ի կողմից կատարված 1120-11001 «Քրեակատարողական ծառայություններ» միջոցառման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» (425100) հոդվածի գծով դրամարկղային ծախսը խելաթյուրված է եղել 20,900.72 հազ. դրամի չափով:

Դասակարգման խելաթյուրումն առաջացել է կապիտալ ծախսերը, որպես ընթացիկ ծախս ճանաչելու արդյունքում: Մասնավորապես, որպես ընթացիկ ծախս են ճանաչվել «Արմավիր» ՔԿԸ-ի վարչական մասնաշենքի տանիքի (կտուրների ընդհանուր մակերեսի 30%-ը գերազանցող) վերակառուցման մասով կատարված 16,516.64 հազ. դրամի չափով ծախսը, ինչպես նաև «Կոշ» ՔԿԸ-ի 630 ԿՎԱ տրանսֆորմատորի, էլեկտրական սարքավորումների և մոնտաժման աշխատանքների մասով կատարված 4,384.08 հազ. դրամի չափով ծախսը:

2.2.3.5. ՖՆ-ի կողմից կատարված 1006-13001 «Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման «Ներքին տոկոսավճարներ» (441000) և «Արտաքին տոկոսավճարներ» (442000) հոդվածները խելաթյուրված են:

Խեղաթյուրումը պայմանավորված է արտարժույթով պետական պարտատոմսերի գծով տոկոսավճարները ներքին և արտաքին տոկոսավճարների միջև տարանջատված չլինելու, դրանք ամբողջությամբ արտաքին տոկոսավճարների հոդվածում ընդգրկված լինելու հանգամանքով: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթով թողարկված պարտատոմսերը ներքին պետական պարտքի աղբյուր են, իսկ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.07թ. N5-Ն հրամանի 16-րդ հավելվածի համաձայն, ներքին տոկոսավճարները բոլոր տոկոսավճարներն են, որոնք վճարվել են կամ հաշվեգրվել են ներքին աղբյուրներին: Ըստ այդմ՝ ՀՀ օրենսդրության համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերը ներքին պետական պարտքի ֆինանսավորման աղբյուր են և դրանց սպասարկման համար վճարվող տոկոսավճարները պետք է հաշվառվեն, որպես ներքին տոկոսավճարներ: Մինչդեռ, ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունում, չնայած արտարժույթային պետական պարտատոմսերի գծով ներքին պարտքի պաշարի առկայությանը, նշված գործիքների գծով ներքին տոկոսավճարներ չեն նշվել:

2.3. Առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն

2.3.1. Առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափ

Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է ՀՀ 2021թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն սույն եզրակացության 2.3.2 բաժնում: Առանձին գերատեսչության մակարդակում առաջարկությունները սույն եզրակացությունում չեն վերաշարադրվում: Դրանք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայք-էջի (www.armsai.am) «Ընթացիկ եզրակացություններ» բաժնում ներկայացված համապատասխան ընթացիկ եզրակացություններում (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների): Առկայության դեպքում, առանձին բաժնով ներկայացվում են պետական բյուջեի մակարդակում Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները:

2.3.2. Ամփոփ տեղեկատվություն

ՀՀ 2021թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել են 66 հատ առաջարկություններ 12 գերատեսչությունների վերաբերյալ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Առաջարկությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

N	Գերատեսչության անվանումը	Առաջարկությունների քանակ
1	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	6
2	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	1
3	Արտակարգ իրավիճակների նախարարություն	1
4	Արտաքին գործերի նախարարություն	3
5	Էկոնոմիկայի նախարարություն	4
6	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե	5
7	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	9
8	Պաշտպանության նախարարություն	2
9	Պետական եկամուտների կոմիտե	7
10	Վարչապետի աշխատակազմ	3
11	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե	13
12	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	12
ԸՆԴԱՄԵՆԸ		66